ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 293 Ա

ք.Արտաշատ

«13» հոկտեմբեր 2023թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱԼԻՆԱ ՄԵԼՍԻԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի 1-ին մասով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 224-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» ենթակետով, 15-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2023 թվականի սեպտեմբերի 13-ի N ՄՈ/266-2023 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից սույն թվականի սեպտեմբերի 14-ին և 15-ին «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Հովհաննես Թումանյանի անվան N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կատարված ուսումնասիրության ընթացքում 2023 թվականի հոկտեմբերի 9-ին կազմված տեղեկանքը և Ալինա Մովսիսյանի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 12-ին ներկայացված բացատրագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Աշխատանքային կարգապահությունը խախտելու՝ աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Հովհաննես Թումանյանի անվան N2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ալինա Մելսիկի Մովսիսյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալինա Մովսիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 **Ս. ԹԵՎՈՆՅԱՆ**